



# ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱԺ

«ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ»-Ի  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԳԱԼՆՈՅԿԻՐԽԵՆՈՒՄ

1977 թվականի մարտի 7—11-ը Գալնոյկիրխենում (Ավաստիա) տեղի է ունեցել «Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանս»-ի կողմից կազմակերպված ուսումնափրական մի խորհրդակցություն՝ քրիստոնեական Եկեղեցիները և ընդհանոր աշխարհը հուզող քաղաքական, ռազմական, տնտեսական, տեխնիկական, մշակութային և մարդկային իրավունքի հարցերի շուրջ: Խորհրդակցության նպատակն է եղել՝ մասնավորապես քննարկել Հելսինկիի համաձայնագրի հետևանքներն ու պարտավորությունները Եվրոպայի և զարգացող երկրների հարաբերությունների նկատմամբ:

19 երկներից և 40 եկեղեցներից շուրջ 70 ներկայացուցիչներ, մեծ մասմբ աշխարհական, մասնակցել են սույն համեմանը:

Հայ եկեղեցու կողմից խորհրդակցությանը, որպես դիտորդ, իր մասնակցությունն է բերել, հանուն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, տ. Մեսրոպ ծ. Վորդ. Գրիգորյանը (1977 թ. ապրիլի 20—23-ը Ռումինիայի Ֆաջ քաղաքում, «Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանս»-ի նախագահության և խորհրդատու հանձնաժողովի խոռն հանդիպությունը վերոհիշյալ կոնֆերանսին):

Խորհրդակցությունը բաց է արել «Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանս»-ի գրախավոր քարտուղար դոկտ. Գլեն Գարֆիլդ Վիլյամսը: Այնուհետև գլխավոր թեմայի շուրջ առանձին զեկուցումներով հանդես են եկել Եջու-ի Ժնևի կենտրոնի պաշտոնատարներից որովայացի դոկտ. Յուլիո դե Սանտա Անան, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի անդամ դոկտ. Ա. Կուցենկովը և նորվեգացի պրոֆ. Քենը Սքենկընելը: Կարդացված զեկուցումների շուրջ տեղի է ունեցել մտքերի աշխույժ փոխանակություն: Խորհրդակցության մասնակիցներն այնուհետև բաժանվել են աշխատանքային երեք խմբերի և ուսումնափրան Եվրոպան և Երկրորդ աշխարհը շաղկապող և հետաքրքրող այժմեական մի շարք հարցեր:

Առաջին խմբի ուսումնափրության թեման է եղել՝ «Արդարության առաջմումը գիտական, տեխնիկական և մշակութային տեսակետներից»: Այս խմբի աշխատանքներին իր գործոն մասնակցությունն է բերել Մայր Աթոռի ներկայացուցիչը:

Երկրորդ խմբում քննարկվել է «Սպառագինությունների մրցավագը և զինաթափումը» հարցը:

Երրորդ խմբի աշխատանքներն ընթացել են «Տնտեսական արդարությունը, էներ-

գիայի պահանջը և ասումական ուժի պատասխանառու գործածությունը» թեմայի շուրջ:

Այսուհետև լիազումար մի նիստի ընթացքում նաեւամասնորեն քննության են առնվել վերոհիշյալ աշխատանքային երեք խմբերի պատրաստած տեղեկագրերը և կատարվել համապատասխան լրացումներ: Տեղեկագրերում ամփոփվել են ընդհանուր աշխարհում տնօւնության զարգացման, տղիալ-քաղաքական արդար կարգերի հաստատման և խաղաղության ամրապնդման համար օգտակար տեսություններ և թերարդություններ: Սույն փաստաթղթերի հիման վրա վերջում ժղովականները հանձնարարություններ են առաջադրել աշխարհի կառավարություններին ու նրանց ղեկավարներին, ինչպես նաև եկեղեցիների առաջնորդներին, որպեսզի՝

ա) Հարգեն մարդկանց ազատությունն ու իրավունքները՝ համաձայն Հելսինկիի եզրափակիչ ակտի հասկացողությանց:

բ) Պաշտպանեն ցեղային, մշակութային, կրոնական և այլ փոքրամասնությանց (ներառյալ գաղթական աշխատավորների) իրավունքները:

գ) Միշագգային մի համաձայնագրով հրաժարվեն ասումական ուութերի կիրա-

ությունից և դադարեցնեն անմարդկային գեներերի գործածությունը:

դ) Մեծ զգուշություն ցուցաբերեն ասումական ուժի «խաղաղ գործածության» ծրագրերի մշակման գործում:

ե) Արդյունաբերությամբ զարգացած ելուստական երկրներում եկեղեցիները հանդես գան էներգիայի անպատճախանությանում դեմ և համայնքների մեջ զարկ տան էներգիայի խնարդական գործածության մտանության ու ստիրությանը:

զ) Եկեղեցիները և համայնքները աղոթք ու պաշտամունք մատուցեն Հելսինկիի շախմակուրյունը հանդիսացող Բելգրադի խորհրդաժողովի հաջողության համար:

Մարտի 11-ին, որքայ օրը, Գալնոյիի խենի ավետարանական եկեղեցում տեղի է ունեցել Էկումենիկ ժամերգություն: Զանազան եկեղեցիների երկայացոցիշներ կարծ նաղթանը-ալղոթներ են կարդացել: Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը երգել է: «Ուրախ լեր, սուրբ եկեղեցի» շարականը, խուել Աթոնաս Աղեքսանդրացի մեծ աստվածաբանի ու Նիկիայի ժողովի հաջողության մեջ նրա ունեցած դերի մասին և ապա հրավիրել է պաշտամունքի մասնակիցներին, որպեսզի համատեղ արտասանեն հիկիական հավատող հանգանակը:

